

ՆԱՄԱԿ ԽՄԲԱԳՐԻՆ

Մեծապատիւ խմբագիր.

«Մուրճ»-ի ալս տարւալ առաջին համարի մի քանի տողերը խզմիրի որոշ շրջանի մէջ մեծ իրարանցում ձգեցին, Նախ դարձեալ դրօշակ բարձրացնելու ցանկալի առիթն ունեցաւ ինձ դէմ «Արեւելեան Մամուլ»-ը և ապա Պոլսի նիդակակիցները, Ահա արդէն չորրորդ տարին բոլորում է, որ ևս արհամարհելով իմ անձի և գործունէութեան վերաբերեալ գրած բոլոր զրպարտութիւնները, թշնամանքները, ստորութիւնները, լուռ ու մունջ աշխատում էի՝ ոլժերիս համեմատ պարտականութիւնս կատարել և հնարաւոր արդիւնքն առաջացնել. Եւ թնչ միտք կար հիմա լանկարծ հրապարակ ելնել և աշնայիսի մարդոց («քլիւպի» անդամները) սիրտը կոտրել, որոնց մեծամասնութիւնը անծանօթ ու կարծեմ նաև բաւականին անտարբեր են եղել դէպի իմ անձը, իսկ մի քանիսն էլ ինձ ծանօթ կամ բարեկամ, Միթէ անդամների մէջ գտնուող իմ մի քանի հակառակորդներին (բաց ալս բառը շատ աննշան է...) իմ ստորագրութեամբ չէի կարող իւր ժամանակն պատասխանել, եթէ ինձ համար ազդպիսի անշահ վկայութիւնները արհեստ չինած լինէի և համոզւած չլինէի, որ դրանց անվերջ հարահրոցները լոկ ռազմագիտական «տաքտիքալի» բան է, ինձ, իրանց աչքի փշին, լուղելով չփոթեցնելու, շլկեցնելու և բուն գործիցս կամ հեռացնելու և կամ գէթ պարտականութիւնս կանոնաւորապէս կատարելում խանդարելու:

Այդ խմբի արարածների նկարագիրը դեռ թող մնալ ալս առթիւ իսկ իմ «տաքտիքա»-ն էր երեք տարի պահպանողական զիրք բռնել, մինչև որ նրանց վառօդը հատնէր (միթէ հատնում կալ աղպիսիների մեկանին, իրաւամբ կարող են հարցնել դրանց ճանաչողները) և ապա ծանուցագրելով ու լրագիրների մէջ լակտարարել, թէ քննական սեղանի վրայ ևն դրւած պ. Մամուրեանի և մեր աշակերտների գրաւոր աշխատութիւնները իսկական ստորագրութիւններով: Ես այդ խոստումս կատարեցի ¹⁾: Այս,

¹⁾ Վկայ են պոլսական հալ և տեղական տաճկերէն ու ֆրանսերէն թեթերը խզմիրի հալ զպրոցների ներկալ լաւաշաղիմութեանը:

ի հարկէ, իրանց քմքին շատ թթու եկաւ, դորա համար նորից պատերազմ հրատարակելու համար պէտք էր ամենադիւրին մի անձնական խնդիր գտնել, որ մեծ բարեբաղդութեամբ դտան «Մուրճ»-ի վերովչեալ տողերում. նրանց բովանդակութիւնն ու ձեռ ամենից շատ կը սաղէր Կովկասեցի տեսուչին, ուստի մի անսպասելի առիթ էր Բալց եւ քանի լուեցի, ալնքան աւելի երես ելան ալդ թուղթ մրտողներն աներեակալելի տողթիւններ հնարելով, Գեռ երկու տարի չէ անցել, որ «Արեւել, Մամուլն» չափն անցկացրեց ինձ իմ աշակերտուհիներին, «սիրաշահել»-ուժ գրապարտուեց չամաչելով (ալդ տողերը Թիֆլիսում իմ ընկերներից մէկի՝ պ. Յ-ցի մօտ են), իս ալլ եւ չհանդուրժեցի. Նախ անլի պատշաճ համարեցի զիմել Աղդալին Վարդութեան խնդրելով, որ պաշտենապէս ետ առնել տալ ալդ վերին աստիճանի անվալել խօսքերը, հակառակ դէպքում ռուսական հիւպատոսարանին զիմելու լալտարարելով, Ալն խնդրն ալն ժամանակ ալնպէս վերջացաւ իւր բաւականութիւնն ստանալով ե հիմա, «Մուրճ»-ի վերովչեալ տողերի առթիւ, նորից անվալել գրապարտութիւններ են անում ալդ խմբի տեղական ե Պոլսի մի երկու թերթերը:

Եւ հիմա էլ դեռ հրապարակ դուրս չէի գալ, եթէ «քլիւպի» անդամների անձնական խնդիրը չլինէր ե ես գոնէ հիմա պէտք չզղալի մեր կովկասցիներից ալս «արտօնեալ աղգասէրների» մասին դեռ ալս ու ալն լաւ գաղափար ունեցողներին՝ առժամանակ ալս շօշափելի փաստերով ներկալացնելու սրանց բարովական սկզբունքները...

Նախ՝ գործին անտեղեակներին ասեմ, որ ես ալս քաղաքը տեսլական պաշտօնի եկալ մի անձի փոխարէն (պ. Մամուլեանց խմբադիր «Արեւելեան Մամուլ»), որ երկար տարիներ ծուռալել էր ու ալսպէս թէ ալնպէս (ժամանակին անլի կարեորութիւն ունեցած լինելով) արժանի էր իւր ծերութեան հասակում աղգի կողմից իբր վարձատրութիւն թոշակ տտանալու: Բալց ալս խրախուսը մեղանում տարարադտաբար դեռ ոչ մի տեղ չկալ (միալն Գէորգեան շեմարանի դասատու պ. Պալեանը) ե նոր տեսուչն, ի հարկէ, ալդ բանում մեղաւոր չէ, քանի որ իրան էլ նոլն սալագան է սալասում: Մեր մեղը բալց ալն է եղել, որ երբ մեղ իբր մասնադէտի հարցրել են Նախկին տեսլի գործունէութեան մասին մեղ լանձնած երկսեռ վարժարանների մէջ, մենք խիստ քննադատել ենք ալդ՝ իբր ներկալ պահանջներից շատ լետ մնացած: Ի հարկէ, ոլ չէր ցանկալ առանց հակառակորդների կատարել մանաւանդ իւր կրթական փափով պաշտօնը. սալալն տարաբաղաբար ալդ անխուսափելի է, երբ հաղար ու մի խնդիրներ են երեան գալիս ու բացատրութիւն ու կարդադրութիւն պահանջելով՝ անցեալի վրալ խօսել հարկադրում, ալն, ուղղակի բռնադատում՝ տարբերութիւններն ու կարիքները ըմբռնելի կացուցանելու համար: Թեքս մտածեն, որ Նախորդի թերութիւնները մենք երիտասարդական

ու մասնագիտական եռանդով աւելի խիստ ենք քննադատել, սակայն այդ մասին հրապարակաւ կարծիք չենք լարտնել, ամեն բան պաշտօնական աղբիւրներից քաղելիք տեղեկագրին վերապահելով որ իւր ժամանակին թէն անմիջապէս կազմեց, սակայն ուշ հրատարակեց ¹⁾։

Այս ալսպէս լինելով ես սպասում էի իմ հակառակորդներից առ առաւելն աւելի խիստ քննադատութիւն, մինչև անգամ չափազանցութիւն իմ գործունէութեան թերութեանց (ի հարկէ այն մեծ գծարութեանց ու խառնակութեանց մէջ անհնար էր ալ կերպ մի քանի օրում գործը բոլորովին կարգի դնել)։ Այո, այդ ես մինչև անգամ չառ հասկանալի պիտի համարէի հոգեբանօրէն։ Բայց ինչ, իմ գործունէութիւնը վերին աստիճանի անխիղճ կամ աւելի ճիշտ է ասել խնդկատակ կերպով քննադատելով՝ նաև իմ անձն ահա քան տոտրացնել ձգտեցին, որ մի Պոլսեցի վարժապետի սրանց մալրաքաղաքացի «զինակիցները» մինչև անգամ ալսպէս էին գաղափար տւել, որ ես նորա դասագիրքը վատագոյնութեամբ վար եմ զարկել, իսկ միւսինը գովել, Պոլսից սպասելիքներ ունենալով և միևնույն ժամանակ իզմիրցիների աչքը «թող փնելով»։ Խեղճն ամուսնանալով տողերի վրայ աւելացնում էր, որ իմ ոտի տակ օրաւուր հողը պակասում է Իզմիրում, դպրոցները քալքաւում են և մի դասագիրք լորինողի փնտսելովն է որ իմ հացը ուտել եմ ուզում... (Բայց գիրքն ինձ նւէր էր ուղարկած, ինչպէս կողքից երևում էր)։ Որքան ցաւալի երևութ ալսպիսի համոզմունքներ հարկաւ փորձառութիւնից ստացած լինելը, Բայց այդ կուսակցութեան ասած ու հրատարակածների տեսակներն ու թիւը անհամար են, ուստի բաւ է, եթէ լիչենք նաև «Մուրճ»-ի վերոյիշեալ տողերի առթիւ գրածները, Նս մի «ապուշ և ստրկամիտ գործի եմ դառած մի քանի կրքոտ գաւառէրն երու ձեռք» (Ոհ, ինչ մեծ ֆրազ, ով նորելուկը ժառանգական ազգասէր որդի—Մամուրեան էֆ. ²⁾), որ իբր թէ ես եմ հրատարակել տւել այդ կծու նկատողութիւնները, որովհետև ինձ այդ «քլիպի» անդամները «երկու տարիէ ի վեր իրենց սրահներուն մէջ կարգ մը պարահանդէսներուն՝ մոռացան կամ չուզեցին հրաւիրել» (Ներոպալում իմ հինգ տարաւ ալն էլ ուսանող կեանքում և ալն բարձր

¹⁾ Թող ընթերցողն հիմա տեսնի այդ տեղեկագրում, թէ մինչև անգամ ազգ. պատմութեան դաս առնելուց ազատ եղողներին մասին ժամանակում «Արձագանք»-ում, ճիշտ էր եղել որի առթիւ «Մամուլը» (նէշիմսէր) էր որ երգեց, Դասատուների համար անպատւաբեր չափարարութիւն կպցնելը դպրոցի սրահում տեսչի կողմից նորերս դարձեալ չորս ուսուցչի խօսակցութեան առարկայ եղաւ։

²⁾ Զեր այդ ուղղութեամբ արածների հետքը պարտկելու համար էք այդ ջախջախիչ ֆրազն արձանագրում... Ժամանակն ամեն բան կը բանալ նաև հեռաւորներին։

ընկերութեանց մէջ ու իզմիրում չորս տարւալ մէջ ո՞վ է տեսել ինձ պարելիս. ճշ պապքէն լուսաց ե հալոց ազգ. պարահանդէսների հրաւերներին ի պատասխան միայն մի անգամ գնացի): Իսկ «Մաղիկ»-ի (ինչ ծագիլ է...) նման ծագիլ թղթակիցս գրում է. «կարծեմ ղինքն անդ լաճախելէ կասեցուցած էին, կամ թէ գրիչս կը տատամսի հին տետրակներէ (ահա ալս գրագէտների վատամները...) իրողութիւններ ստորագրել (միթէ 1—2 անգամ իբր հիւր երթալս ապա ամենին չլաճախելս իրանց կողմից կասեցնել է. ես Երբ եմ խնդրել անգամ ընդունուիւ Զօհրապ էֆ. էլ «Մասեաց վեհապան՝ քարձուքէն» «Մուրճ»-ի թղթակիցը «անձուկ մտքի տէր» անւանեց ալս առթիւ. ի՞նչ շուտ մոռացաւ իզմիրի նոյն երիտասարդների մասին երկու տարի առաջ գրած չափազանցութիւնները... Հիմա միթէ ալլքան գոհ է ալլ կեանքից:

Վերջապէս նորեւոյ գրագէտը անգուպ բառերով հետեւալ կերպով է շարունակում. «Մամուրեանի դպրոցից եղածները, եթէ կը բաղդատուին հիմականս եղածներուն հետ, մեծ անմտութիւն կը լինի, քանի որ Մամուրեանի օրանս աշակերտներն չափահաս երիտասարդներ էին, որ դպրոցի մատենադարանի զրքերէն կ'օգտւէին, մինչդեռ այժմեան բարձր կարգի աշակերտները մանուկներ են...» Նախ ուղիղ չէ ալլ. մենք պ. Մամուրեանի աշակերտներն էլ տեսանք, երկրորդ թող տեսնի ընթերցողը որ անաւալէս է ուղիղեցնում հալը որդուն, թէ մի ալն մեծ-մեծ պե լսելով երիտասարդն երբ պէտք է ընթերցանութեան գրքեր կարդան...

Թող ներէ չարգելի ընթերցողը, եթէ ես, հակառակ իմ սովորութեան, ալս առաջին անգամ հարկադրեցի ալքան տարիներից լետու նրան զրաղեցնել մի աւելի անձնական խնդրով, որ լուսամ հետաքրքրութիւնից զուրկ չի լինի, մի կովկասցու և տաճկահալ որոշ ուղղութեան գործիչների մի ընդհարման համառօտ նկարագիրը ներկայացնելով:

Եւ դուք, պ. խմբագիր, լուս ունիմ, թէ «Մուրճ»-ի մի ետ ընկած անկիւնը չէք մերժիլ ալս տողերիս, որովհետեւ բարոյական պարտականութիւն ունիք գէթ ալս չափով մեր ցանկութիւնը չարգելու, քանի որ գիտէք, թէ վերջին թշնամանքներն էլ մենք առիթ չենք տուել: ¹⁾ Ես գրել եմ

¹⁾ Պարտք ենք համարում չալտնել, որ «Մուրճ»-ը Զմիւռնիալում խորագրով ապաժ տողերը («Մուրճ» 1893 թ. № 1, էջ 185), որ անագին աղմուկի տեղիք տւին Զմիւռնիալում ե Պոլսում, մենք հրատարակել էինք, օգտուելով մեզ ուղարկած մի մասնաւոր նամակից և ոչ նամակագրի խնդրանքը. Ալլ տողերի առիթով անտեղի լետադիմական խմբերի կողմից եղած բալց և զգաւնք չարուցանող ժալթքումները լաւ ապացոյց են, սակալն, թէ որքան նպատակալարմար էր «Մուրճ»-ի մէջ ալն տողերի հրատարակելը: Մէջ տեղում միջնորդը պարզեց, անա դրական օգուտը, մեր տեսակէտից:

Մանօթ. Խմբ.

և պիտի գրեմ պ. Մամուրեանի մանկավարժական գործունէութեան մասին, երբ առիթը ներկայանալ, չմոռանալով նորա արժանիքը համեմատական տեսակէտից, նունպէս էլ նորա համախոհների ու խիստի ներկայ երիտասարդութեան մասին աւելի խիստ, քան ինչ «Մուրճ»-ում էր հրատարակած: Թող ով կուզէ ակդ կեանքից գոչ լինի...

Յ. ՏԷՐ-ՄԻՐԱՔԱՆՆՅ.